

□□

... Արթնանում եմ, ծայն եմ տալիս արևին, իմ ծայնից զարթնում է ծիծաղը ու ծավալվում հորիզոններին...
Ինձ հետ զարթնում է և առասպելը օրվա, կարոտը թևեր է առնում, ցավն ու հրաշքն ապրում են կողք - կողքի, առասպելը դառնում է կյանք, կյանքը՝ բանաստեղծություն...

Ստեղծագործություններս տպագրվել են Հայաստանի և արտերկրի շատ թերթերում, ամսագրերում և կայքէջերում, թարգմանվել տարբեր լեզուներով:

Բանաստեղծությանը զուգահեռ գրում եմ նաև մանկական պատմվածքներ, զբաղվում գիտական գործունեությամբ: 2003-ին պաշտպանել եմ ատենախոսական թեզ:
2001թ. լույս է տեսել «Մտորումներ աշնան կեսին» բանաստեղծությունների ժողովածուն:
2003թ. «Մարո Մարգարյանի քնարերգությունը» մենագրությունը:
2004-ին «Կանաչ կառեթներ» բանաստեղծությունների ժողովածուն:
2008-ին «Կանաչուկը» մանկական գիրքը:
2008-ին «Ես բառ եմ դարձել» բանաստեղծությունների ժողովածուն:
2009-ին «Խոսե՛ք, դուք ունեք երեք թուպ» թարգմանությունների ժողովածուն (Խուլիո Կորտասար):
2010-ին «Թռիչք մեռած հողում» թարգմանությունների ժողովածուն (Ալֆոնսինա Սթորնի):
2010-ին «Կարմիր հողմաղացներ» հեքիաթների ժողովածուն:

□□□□

Անիրական ազդակների ոլորտինն է հոգին: Բանախոսության մակույկը, որի մեջ տարուբերվում ենք, մեզ դեպի իռացիոնալն է տանում: Կյանքում ամեն ինչ ընթանում է կանխավ որոշված գնացքի ոգով, ուղի, որի մասին երբեք չի բարձրաձայնվում:
Աշխարհում ավերման ենթակա են բոլոր շինությունները, մարդկային հոգու կերտվածքը՝ երբեք:

□□□□

Երբ քեզ են սիրում, դա հաճելի է, բայց երբ դու ես սիրում, դառնում ես հարուստ, ու ողջ աշխարհն է քոնը դառնում:

Մենք բոլորս սիրում ենք, բայց ամեն մեկն իր ձևով:

... Երբեմն - երբեմն պետք է կարողանալ գտել, մաքրել հիշողությունները և վերականգնել տիեզերքը նոր լույսի ներքո, այլապես արտաքին աշխարհը կսահմանափակվի սեփական մարմնի մակերեսով միայն, սեփական քթի երկարության չափով, իսկ ներքինը անձեռնմխելի կմնա ցանկացած զգացմունքի հանդեպ:

Մարդիկ երագում են մե՛ծ սերերի, ասպետների ու փերիների մասին, իսկ մեզ այնքա՛ն քիչ է հարկավոր, իրական ու շոշափելի՝ ՄԵՐԸ...

□□□□□□

Մեր կյանքը՝ ծնունդից մահ ընկած ժամանակահատվածը, ալքիմիա է, յուրօրինակ պեղում, որ մեզ տանում է անընդհատ բյուրեղացման: Որոնում ես, փնտրում, հայտնաբերում այն թանկարժեքը, որ օգնում է ներդաշնակվելու, ապրածդ օրը դարձնելու արժեքավոր:

Հ.Գ. Կյանքը դառնում է յուրօրինակ փորձանոթ, որի միջով մենք անցնում ենք սկզբից մինչև վերջ, ծնունդից մինչև մահ՝ բյուրեղանալով, մաքրվելով, ազնվանալով:

□□□□□□

... Մարդը պարտավոր չէ քեզ սիրել կամ հասկանալ: Եվ, բարեկամներով ու թշնամիներով շրջապատված, միևնույն է, մենք հավերժ մենակ ենք, հավերժ մենակ է մեր ԸՆԹԱՑՔԸ: Բայց սա նույնպես ճանապարհ է, քանի որ չկա ոչինչ բարձր մարդկային կյանքից՝ ժամանակի սահմանափակ տիրույթում: Նախևառաջ՝ մարդկային կյանքը: Եվ, ինչու չէ՞ կարելի է հաղթել իրականությունը, երբ հաղթենք ինքներս մեզ՝ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՈՐՈՆՄԱՆ ՃԱՆԱՊԱՀՐՀԻՆ:

□□□□

Կորուստներից վատթարագույնը մահն է. նրանից անդին անդառնալի ոչինչ չկա: Այդ

դեպքում միայն ոչինչ փոխել չես կարող: Միայն այդ դեպքում է, որ ցած ես դնում բոլոր գեներերդ:

Արարիչը երբեմն վերցնում է մեր մտերիմներից մեկի կյանքը, որպեսզի մեզ՝ հասարակ մահկանացուներին, ապացուցի մեր անգործությունը: Պետք է զգալ Վախճանը, ապրել ամեն վայրկյանով, սիրել կյանքը, ահա մարդու՝ աշխարհի նկատմամբ ունեցած այն մեծ սերը, որ անհրաժեշտ է ապրելու և ստեղծագործելու համար:

□□□□□□ □□

Սիրում եմ հողը, ջուրը, արևը, սիրում եմ առավոտը, արշալույսի այն պահը, որ միայն քոնն է, երբ ոչ ոք չկա, որ խանգարի քեզ,... սրբազան վայրկյան... երբ լռությունն է ու դու... երբ հերթով արթնանում եմ մարդիկ, արթնանում է աշխարհը, երբ պատուհաններից առկայծում եմ ճրագները, դիմավորում արևածագը... ոմանք երեկվա կիսատ գործն են շարունակում, ոմանք՝ նոր գործ սկսում...

Առավոտը ամեն ինչի սկիզբն է...

□□□□□□□□□□□□□□□□

Բանաստեղծության նյութն անսպառ է. գրել են, գրում են, պիտի գրեն:

Գոյի ու ստեղծումի տիեզերական մի խորհուրդ կա, որ կոչվում է ԿՅԱՆՔ, և դրված է մարդու՝ հողեղեն ու բանական գոյաձևի հիմքում: Բանաստեղծություն բանաստեղծությունից անդին... այստեղ է արարման խորհուրդը, ժամանակ ժամանակի մեջ՝ առեղծված, մարդկության չբացահայտված գաղտնիքներից մեծագույնը:

□□□□□□□

Արվեստը չպետք է ծնվի օգտակարության խնդրից. այն հոգևոր դաս է, անկեղծության երջանիկ վայրկյան, ճշմարտության հաղթանակ: Այստեղ ինչ ուժգնությամբ որ ընդգծվում է գեղեցիկը, նույն թափով էլ պետք է ընդգծվի տգեղը: Թափանցել իրերի ու երևույթների խորքը, տեսնել ոգին, ահա արվեստագետի կոչումը, ստեղծագործ մտքի սլացքը, որ գեղարվեստական ձևի միջոցով տանում է դեպի իմացական ճանաչողություն...

□□□□□□□□

Կա մարդը - կա զգացողությունը, կա ապրելու իմաստը, կան շատ պայմանականություններ, որ շրջապատում են նրան:

Չկա մարդը - չկա և ոչինչ, ապրածը միֆ էր, երագ, առասպել, կա միայն նրա ստեղծածը, իրենից հետո թողածը, լավ ու վատ գործը:

Ժամանակը նույնն է բոլորի համար, նույնն են ժամերը, նույնն են րոպեներն ու վայրկյանները, ուղղակի պետք է կարողանալ կյանքից վերցնել ավելին, լավը, հաճելին: Գոյության պայքարը բոլորինն է՝ օդ, ջուր, հող, բույս, մարդ, կենդանի, թռչուն. այն ամենը, ինչ կազմում է օրգանական աշխարհը ամբողջության մեջ...

□□□□□□

Հայացքը կյանքին՝ ստեղծում է ՏԵՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ հարաբերականությունը, որն էապես միտում է կյանքի մետաֆիզիկական ընկալումից: Բանաստեղծության հասարակական էությունը ծառայում է տարբեր նպատակների, թեպետ նրա գործառույթը էապես լեզվի զարգացման տիրույթում է: Կյանքն ու մահն անբաժանելի են, և կյանքը հնարավոր է միայն այնքանով, որ ի վերջո, հպատակեցնում է մեզ աստվածային ՍԿԶԲԻՆ, մոտեցնում մահվան, հետևաբար և, Աստծուն: Ձևն ինքը պետք է լինի բովանդակության արտահայտիչը:

□□□□

Փշերը...

Փշերն անպայման պետք է լինեն, որ գնահատենք մեր ճանապարհին երջանիկ պահերը... Երբեմն կյանքն ավելի լավ հասկանալու համար ուտում են բոլորովին անհամատեղելի կերակուրներ, ասենք՝ աղով բողկ և քաղցր թեյ: Համի այդ անհամատեղելիությունն էլ ինձ ստիպում է հաղթել ստեղծված այն անսպասելի իրավիճակ - ձգնաժամը, որն ինձ հոգեբանորեն ճնշում է:

...Հոգեպես ուժեղներ չկան, կան միայն դրությունը վերահսկողներ: Փորձիր կարտոֆիլը համեմել աղով նրա վրա դրված պատառաքաղի մատների արանքից. այդպիսի շերտեր են հիշեցնում նաև կյանքի պարզ ու բարդ կողմերը:

